Լողափային-բաց-փառատոնային ճամբարների

կազմակերպման կարգ

2021թ. հուլիսի 14-ից կրթահամալիրի Արևելյան դպրոց-պարտեզում, Արևմտյան դպրոց-պարտեզում, Հյուսիսային դպրոց-պարտեզում, Հարավային դպրոց-պարտեզում և Միջին դպրոցում գործում են լողափային բաց-բացօթյա-փառատոնային ճամբարներ (այսուհետ՝ Ճամբար): Ճամբարների աշխատանքը պատշաճ կազմակերպելու համար.

1. Ճամբարի ուղեգրի արժեքը.
   - 5-օրյա ուղեգիր – 10.000 դրամ (վճարված գումարը հաջորդ շաբաթ չի տեղափոխվում)
   - 1-օրյա ուղեգիր – 2.500 դրամ.
2. Ճամբարը գործում է աշխատանքային օրերին՝ երկուշաբթվանից ուրբաթ
3. Ճամբարում սաների թիվը կարող է լինել 12 - 24. 15-ից ավելի սանի դեպքում ճամբարի ղեկավարը պետք է ունենա օգնական:
4. Ուղեգիրն իր մեջ ներառում է երկուանգամյա սնունդ, լող, ուսումնական գործունեություն.
5. Ճամբարը գործում է երկուշաբթիից ուրբաթ օրերին, ժամը՝ 09.00-17.00.
6. Ճամբարի պետերին նշանակել ըստ հերթափոխների՝ 5-օրյա ժամկետներով.
7. Ճամբարը ծնողների համաձայնությամբ կարող է ունենալ նաև արտագնա բաղադրիչ.
8. Ճամբարի գործունեությունը ամեն օր լուսաբանվում է մասնաճյուղի կայքում, ղեկավարի բլոգում.